Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտոր, մ.գ.դ. _____ Ա.Մ. Ծատուրյան

«11» 02. 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» խորագրով (ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն») մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 15, կայացած՝ 10.02.2026թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Բաղդասարյանը, դոցենտներ՝ Ք. Վիրաբյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Մարուքյանը, Զ. Գրիգորյանը, ավագ դասախոսներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, դոցենտ Ա. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Ա. Ղազարոսյանը, դասախոս՝ մ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը, Տ. Մալումյանը:

Ժամանակակից հասարակության մեջ ընտանիքը որպես հիմնական սոցիալական ինստիտուտ անընդհատ ենթարկվում է փոփոխությունների և փորձությունների: Հատկապես երիտասարդ ընտանիքները, գտնվելով ավանդական և ժամանակակից արժեքների բախման գոտում, հաճախ բախվում են դերային անհամապատասխանությունների և կոնֆլիկտների, որոնք կարող են սպառնալ դրանց կայունությանը: Այս առումով Նաիրա Սարհատյանի ատենախոսությունը, որն ուսումնասիրում է երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունների պայմանավորվածությունը ծնողական ընտանիքների վարքային մոդելներով, բարձր գիտական և գործնական արդիականություն ունի:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, 14 աղյուսակից, 2 նկարից, 130 անուն օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 151 համակարգչային էջ:

Ատենախոսության ներածական մասում համապարփակորեն և հիմնավորված է ներկայացված հետազոտության արդիականությունը, օբյեկտն ու առարկան, ձևակերպված են գիտական վարկածը, նպատակն ու խնդիրները: Հեղինակը հստակ է նշել աշխատանքի տեսական, մեթոդաբանական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները: Հատուկ ուշադրություն է դարձված նաև տեսամեթոդաբանական հիմքի կառուցվածքին, որն ապահովում է հետազոտության ամբողջականությունը, տրամաբանական հստակությունը և գիտական փաստարկվածությունը: Այս ամենը վկայում է, որ հեղինակը գիտական աշխատանքի կառուցման և ներկայացման բոլոր պահանջները լիարժեք կերպով կատարել է գիտական բարձր մակարդակով:

Ատենախոսության առաջին՝ **«Ամուսնության և ընտանիքի զարգացման նկարագրությունը հասարակության պատմության ընթացքում»**, և երկրորդ՝ **«Ընտանեկան ճգնաժամերի սոցիալ-հոգեբանական վերլուծությունը»** գլուխներում ներկայացված տեսական վերլուծությունն ընդգրկում է ընտանիքի զարգացման

պատմամշակութային և սոցիալ-հոգեբանական ասպեկտները, ընտանեկան ճգնաժամերի և կոնֆլիկտների բնույթն ու պատճառները: Հեղինակը հենվել է մասնագիտական գրականության լայն շրջանակի վրա՝ ապահովելով հետազոտության տեսական հիմքի ամբողջականությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«Երիտասարդ ընտանիքների կոնֆլիկտների առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն և վերլուծություն»** գլխում մանրամասն նկարագրված է հետազոտության կազմակերպումը, ընտրանքի կառուցվածքը (ընդհանուր 240 մասնակից՝ բաժանված 4 խմբի), կիրառված մեթոդների և մեթոդիկաների (Թոմասի, Ստոլինի, Ալեշինայի, Վոլկովայի, Շեֆերի-Բելլի PARI և այլն) համալիրը: Արդյունքների մշակումն իրականացվել է ժամանակակից մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով՝ SPSS ծրագրային փաթեթի միջոցով:

Հետազոտության փուլերը, օգտագործված մեթոդները, հետազոտվող համակազմի ընտրությունը համապատասխանում են առաջադրված վարկածին ու պաշտպանության ներկայացվող դրույթներին: Հեղինակը հստակ բացատրում է հետազոտության ընթացակարգային լուծումները, ներկայացնում է արդյունքների հավաքման և մշակման մեխանիզմները, ապահովում է ստացված տվյալների վերլուծության թափանցիկությունը: Արդյունքների որակական և քանակական մշակումները ներկայացված են գրաֆիկական և աղյուսակային տարբերակներով, որոնք ոչ միայն արտացոլում են հետազոտական գործընթացի ողջ դինամիկան, այլև թույլ են տալիս ընթերցողին պարզորեն հետևել վարկածի ստուգման ընթացքին և ստացված արդյունքների տրամաբանական կապերին:

Փորձարարական տվյալների վերլուծությունը հաստատել է հետազոտության հիմնական վարկածը՝ ցույց տալով երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունների ու բավարարվածության աստիճանի և նրանց ծնողական ընտանիքների մոդելների միջև ուժեղ սերնդային կապ: Բացահայտվել է, որ կոնֆլիկտային ընտանիքներում նկատվում է ծնողների վարքագծային օրինաչափությունների և դերային սպասումների ուժեղ փոխանցում սերնդեսերունդ,

մինչդեռ ոչ կոնֆլիկտային ընտանիքներում այդ կապը զգալիորեն ավելի թույլ է կամ բացակայում է: Այս արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ երիտասարդ ամուսինների միջև շատ կոնֆլիկտներ իրենց բնույթով «մերձամուսնական» են և հանդիսանում են ծնողական մոդելների անգիտակցական կրկնություն:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և գիտական նորույթը պատշաճ մակարդակով ձևակերպված են և լիարժեքորեն արտացոլված են աշխատանքի ընդհանուր եզրակացություններում: Արդյունքում արված եզրահանգումները և առաջարկությունները հիմնվում են թե՛ տեսական վերլուծությունների, թե՛ փորձարարական տվյալների համադրության վրա՝ ապահովելով դրանց գիտական արժանահավատությունը և կիրառական նշանակությունը: Այս ամենը վկայում է, որ ատենախոսությունն ունի բարձր գիտական արժեք, խորը տեսական հիմնավորում և գործնական կիրառելիություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 10 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Հետազոտության ծավալն ու որակը համապատասխանում են առաջադրված խնդիրներին: Մեթոդաբանական մոտեցումը, տվյալների հավաքման և վերլուծության ընթացակարգերը համապատասխանում են հոգեբանական գիտության պահանջներին և ապահովում են արդյունքների հավաստիությունը:

Ներկայացված աշխատանքը որակական առումով բարձր է գնահատվում շնորհիվ՝

- գիտական աղբյուրների մանրակրկիտ տեսական վերլուծության,
- տեսագործնական կիրառության նշանակության,
- հետազոտական մեթոդների հստակ համակարգի ընտրության:

Աշխատանքը գրված է գրագետ, պահպանված են գիտական գրավոր խոսքին հատուկ արտահայտչամիջոցները:

Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության դրական կողմերին և արժանիքներին անդրադառնալուց հետո, նշենք նաև որոշ դիտարկումներ, որոնց վերաբերյալ կարևորում ենք ատենախոսի մեկնաբանությունները.

1. Ե. Շեֆերի և Ռ. Բելլի՝ «Ընտանեկան կյանքի տարբեր կողմերի նկատմամբ ծնողների դիրքորոշումների մեթոդիկայի» (PARI) ընտանեկան կյանքի 23 կողմերից հեղինակն առանձնացրել է դրանցից 5-ը: Ցանկալի է հիմնավորել ինչու՞ հենց այդ ընտրությունը, արդյո՞ք ընտանեկան կոնֆլիկտների ուսումնասիրության համար մյուսներն այդքան էլ կարևոր չէին:

2. Ցանկալի է հիմնավորել հետազոտական 2-րդ և 4-րդ խմբերի ընտրությունը. ինչո՞ւ են ընտրվել ստուգիչ խմբի տղամարդկանց հայրերը և կանանց՝ մայրերը:

3. Աշխատանքը կշահեր գործնական առաջարկներն առավել կոնկրետ ներկայացնելու դեպքում:

4. Աշխատանքը զերծ չէ ձևակերպումների և ձևավորման թերություններից: Ատենախոսության տարբեր բաժիններում առկա են տեխնիկական վրիպումներ:

Վերը նշված դիտողությունները չեն արժեզրկում ատենախոսության գիտական նշանակությունը: Հեղինակի կողմից ստացած գիտական արդյունքները, կատարած եզրահանգումները կարելի է որակել որպես հոգեբանության մեջ գիտական հիմնախնդրի լուծում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ավարտուն գիտական հետազոտություն և որոշակի ներդրում է ընտանիքի սոցիալական հոգեբանության բնագավառում:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է հայցվող հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,

մ.գ.թ., դոցենտ՝ Լ.Գ. Բաղդասարյան

Լ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ-ի գիտքարտուղար,

մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս. Բեժանյան